ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1896-Ա/2 **«17» հոկտեմբերի, 2022 թ.**

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (EXPERIMENTAL DEVELOPMENT PROJECTS) ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Կազմակերպել Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում փորձարարական մշակումների նախագծերի (Experimental Development Projects) հայտերի ընտրության մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելված N 1-ի և հայտարարության տեքստը՝ համաձայն Հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2022 թ. հոկտեմբերի 17-ի
N 1896-Ա/2 հրամանի

ՀՐԱՎԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (EXPERIMENTAL DEVELOPMENT PROJECTS) ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մրցույթը

1.1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում փորձարարական մշակումների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) հայտերի (այսուհետ՝ Հայտ) ընտրության մրցույթն (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 17-ի N 1896-Ա/2 հրամանի:

1.2. Մրցույթը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված գիտական և գիտատեխնիական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով:

1.3. Մրցույթն ուղղված է գիտական հետազոտությունների և գործնական փորձի միջոցով նոր տեխնոլոգիաների, արտադրանքի, ծառայությունների, համակարգերի, մեթոդների ստեղծմանը կամ դրանց կատարելագործմանը:

1.4. Մրցույթի հրավերի փաթեթը սահմանում է դրան դիմելու կարգը, պահանջվող չափանիշները, հայտերի գնահատման գործընթացը և շահառու Նախագծերի ֆինանսավորումն ու հաշվետվողականությունը:

2. Նպատակը

2.1. Մրցույթի նպատակներն են.

- աջակցել նոր տեխնոլոգիաների մշակմանը,
- աջակցել տեխնոլոգիաների պատրաստիության մակարդակի բարձրացմանը,
- նպաստել արտադրության մեջ գիտական հետազոտությունների արդյունքների կիրառմանը,
- նպաստել գիտական և գիտատեխնիկական գործունեության սոցիալ-տնտեսական ազդեցության աճին,
- խթանել բնական, բժշկական, գյուղատնտեսական գիտությունների և ճարտարագիտության բնագավառում կիրառելի մշակումների իրականացումը,
- նպաստել գիտության և բիզնեսի միջև կապերի ձևավորմանը,

3. Նախագիծը

3.1. Ներկայացվող Նախագծերը պետք է համապատասխանեն գիտական և գիտատեխնիկական գործունեության «Բնական գիտություններ», «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա», «Բժշկական գիտություններ», «Գյուղատնտեսական գիտություններ» բնագավառներին (Հավելված N 2.1):

3.2. Նախագծերն իրականացման ավարտին պետք է ունենան Տեխնոլոգիաների պատրաստիության մակարդակներից (այսուհետ՝ ՏՊՄ) (Հավելված N 2.2) ավելի բարձր մակարդակ քան դիմելու պահին, բայց ոչ պակաս քան ՏՊՄ 4:

3.3. Նախագծերը պետք է ունենան համաֆինանսավորում շահագրգիռ ոչ պետական կազմակերպության կողմից:

4. Համաֆինանսավորումը

4.1. Նախագծի համաֆինանսավորումը պետք է լինի առնվազն 6000 հազար ՀՀ դրամ:

4.2. Համաֆինանսավորող կազմակերպությունը ֆինանսավորումը կատարում է ոչ Հայաստանի Հանրապետության բյուջետային միջոցներից:

4.3. Համաֆինանսավորող կարող է լինել այն իրավաբանական անձը, որը ստեղծվել է Նախագծի ներկայացման վերջնաժամկետից առնվազն 2 տարի առաջ:

4.4. Համաֆինանսավորող կազմակերպությունը պետք է հետաքրքրված լինի Նախագծի վերջնարդյունքի կիրառության մեջ:

4.5. Գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) (այսուհետ՝ Կազմակերպություն) և համաֆինանսավորող կազմակերպության միջև կնքվում է

համապատասխան պայմանագիր, որի պատճենը ներկայացվում է Կոմիտե: Պայմանագրում պետք է նկարագրված լինեն Նախագծի իրականացման վերջնարդյունքում առաջացող մտավոր սեփականության տնօրինման հետ կապված հարցերը:

4.6. Համաֆինանսավորումն իրականացվում է երկու փուլով՝ Նախագծի մեկնարկին՝ ոչ պակաս քան համաֆինանսավորման գումարի կեսը, և մեկնարկից 12 ամիս հետո՝ նախատեսված մնացած գումարը:

4.7. Շահառու Նախագծերի ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սկսվում է համաֆինանսավորման համապատասխան ծավալը փոխանցվելուց հետո:

5. Խմբի անդամները

5.1. Յուրաքանչյուր Նախագիծ մշակում և իրականացնում է 4-5 անձից բաղկացած գիտահետազոտական խումբը (այսուհետ՝ Խումբ), որը կազմված է Խմբի ղեկավարից (հիմնական հետազոտող) և կատարողներից:

5.2. Խմբի անունից հանդես է գալիս միայն Խմբի ղեկավարը:

5.3. Խմբի ղեկավարը և կատարողները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներ, ինչպես նաև Նախագծի իրականացման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

5.4. Խմբի ղեկավար կարող է լինել այն անձը, ով՝

- ծնվել է 1952 թվականի հունվարի 1-ից հետո,
- ունի գիտական աստիճան,
- վերջին 5 տարիների ընթացքում ունի միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (Web of Science կամ Scopus) հրապարակված առնվազն մեկ հոդված:

5.5. Խմբի կատարողը պետք է հանդիսանա առնվազն բակալավրիատի երրորդ կուրսի ուսանող:

5.6. Խմբում պետք է ընդգրկվի Նախագծի գիտական և գիտատեխնիկական բնագավառին առնչվող մասնագիտությամբ առնվազն երկու կատարող, ով ծնվել է 1987 թվականի հունվարի 1-ից հետո: Նշված տարիքային շեմը կարող է ավելանալ՝

- ՀՀ զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ հավելյալ 2 տարով,
- երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար հավելյալ 1 տարով:

5.7. Խմբի անդամները (ներառյալ ղեկավարը) չեն կարող ընդգրկվել սույն Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում:

5.8. Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցութային (այդ թվում՝ միջազգային) նախագծերի, թեմաների կամ ծրագրերի ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտությունների խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ թեմաների աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2023» մրցույթի (2022), ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կրթության և հետազոտությունների նախարարության կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-գերմանական համատեղ թեմաների աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԳԿՀԴՆ - 2022» մրցույթի (2021), «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2021» մրցույթի, «Գիտական խմբերի մեկնարկի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի» (2020), «Գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի» (2020), «Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի» (2021), «Առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի» (2021), «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր» (2022) մրցույթի և «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման» (2022) մրցույթի շահառուների), եթե այդ նախագծերը, թեմաները կամ ծրագրերը չեն ավարտվում մինչև սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված Նախագծերի ֆինանսավորման սկիզբը:

5.9. Խմբի ղեկավարը կարող է դիմել Կոմիտե Խմբի կատարողի համարժեք փոփոխություն կատարելու՝ ըստ տարիքային խմբի և գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի, կամ Խմբի կատարողների թիվը (բացառությամբ մինչև 35 տարեկան կատարողի) մեկով կրճատելու միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում(ներ): Խմբի կատարողների թվի կրճատման դեպքում Խմբի ղեկավարի և Կոմիտեի միջև կնքվում է Պայմանագրի գնի փոփոխության մասին համաձայնագիր:

6. Ժամկետները

6.1. Նախագծերի իրականացման տևողությունը 24 ամիս է:

6.2. Նախագծերի իրականացման ավարտից հետո, դրանք կարող են շարունակվել ևս 12 ամսով:

6.3. Մրցույթին դիմելու վերջնաժամկետն է 2022 թվականի նոյեմբերի 25-ը: (Հայտերի ուղարկման հնարավորությունը կարգելափակվի Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

6.4. Շահառու Նախագծերի ղեկավարների և Կազմակերպության հետ պայմանագրեր կկնքվեն արդյունքների հայտնի դառնալուց հետո 10 օրյա ժամկետում:

6.5. Նախագծերը սկսվում և իրականացվում են պայմանագրում նշված ժամկետներում:

7. Նախագծերի շարունակումը

7.1. Նախագծերն իրականացման ավարտից հետո կարող են շարունակվել ևս 12 ամսով, եթե՝

- ներկայացված ամփոփիչ հաշվետվության վերաբերյալ մասնագիտական փորձագիտական խորհուրդը (ասուհետ՝ Խորհուրդ) տվել է դրական եզրակացություն,
- Նախագծի ղեկավարի կողմից ներկայացվել է Նախագիծը շարունակելու մասին դիմում և հայտ՝ ըստ համապատասխան ձևաչափի,
- Նախագծի ամփոփիչ հաշվետվությունը պարունակում է հիմնավոր տեղեկատվություն ի սկզբանե նախատեսվող արդյունքների ձեռքբերման և մշակվող տեխնոլոգիայի պատրաստիության մակարդակի վերաբերյալ,
- Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնոլոգիաների փոխանցման կենտրոնից ներկայացվում է երաշխավորություն Նախագծի վերջնական արդյունքի առևտրայնացման հնարավորությունների վերաբերյալ:

7.2. Շարունակման համար ներկայացված հայտերը գիտական փորձաքննության են ենթարկվում Խորհրդի կողմից:

8. Դրամաշնորհների ծավալը

8.1. Յուրաքանչյուր Նախագծին Կոմիտեի կողմից տրամադրվող դրամաշնորհի առավելագույն ծավալը կարող է լինել 30.000 հազար ՀՀ դրամ 24 ամսվա համար:

8.2. Շարունակման երաշխավորված Նախագծերը կարող են ստանալ ևս մինչև 15.000 հազար ՀՀ դրամ, հաջորդ 12 ամսվա համար:

II. ՆԱԽԱԳԾԻ ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Հայտի ներկայացումը

9.1. Հայտը լրացնում և ներկայացնում է Խմբի ղեկավարը՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի *(այսուհետ՝ Համակարգ)* միջոցով (grants.scs.am):

9.2. Կոմիտե ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

- Խմբի ղեկավարի դիմումը (Հավելված N 2.3),
- Համակարգում ձևավորված և ծածկագիր ստացած Հայտի տիտղոսաթերթը, ֆինանսական նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ),
- Կազմակերպության կամ բուհի ֆակուլտետի գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը, որը պետք է պարունակի տեղեկություն Նախագծի կարևորության և արդիականության վերաբերյալ: Եթե Կազմակերպությունը չունի գիտական (գիտատեխնիկական) խորհուրդ, ապա պետք է ներկայացվի տվյալ բնագավառի ՀՀ որևէ այլ հանրային գիտական կազմակերպության գիտական խորհրդի եզրակացությունը,
- կատարողների վերջին դիպլոմների պատճենները, իսկ ասպիրանտ կամ ուսանող հանդիսանալու դեպքում՝ համապատասխան տեղեկանք(ներ)ը,

9.3. Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 8-րդ հարկ, 808 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22)՝ մինչև 2022 թվականի **դեկտեմբերի 2-ը** ներառյալ:

Ուշադրություն. Հայտերը, որոնք չեն ուղարկվել վերը նշված կարգի և ժամկետների համաձայն, չունեն ծածկագիր, հետևաբար, քննարկման ենթակա չեն: Կոմիտեն քննարկման է ընդունում միայն Համակարգի կողմից ձևավորված և ծածկագիր ստացած Հայտերը:

10. Նախահաշվի կազմությունը

10.1. Նախահաշիվը պետք է ներկայացնել Նախագծի ընդհանուր արժեքի համար՝ առանձին նշելով յուրաքանչյուր տարվա համար Կոմիտեի և համաֆինանսավորող կազմակերպության կողմից հայցվող ֆինանսավորման ծավալները:

10.2. Նախահաշվի «Աշխատանքի վարձատրություն» հոդվածը կազմելիս պետք է Խմբի անդամների աշխատանքի ամսական վարձատրության միջին հաշվարկային չափն ընդունել մինչև 200 (երկու հարյուր) հազար ՀՀ դրամ:

10.3. Եթե աշխատանքի վարձատրության համար նախատեսված գումարը պակաս է վերոնշյալ ծավալից, ապա տարբերությունը կարելի է օգտագործել Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:

10.4. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման և/կամ ծառայությունների ծախսեր: Խմբի ղեկավարը կարող է կնքել ծառայությունների մատուցման պայմանագրեր միայն իրավաբանական անձանց հետ՝ այն համաձայնեցնելով Կոմիտեի հետ:

10.5. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթահոդվածով նախատեսվող գումարը կարող է օգտագործվել միջազգային գիտական միջոցառումներին մասնակցելու համար:

10.6. Գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձը հաշվարկելիս անհրաժեշտ է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ, սակայն գործուղման ընդհանուր տարեկան ծախսերը չպետք է գերազանցեն 3000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը, իսկ օրապահիկը՝ տարեկան 2000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը:

10.7. Նախահաշվի «Վերադիր ծախսեր» հոդվածով նախատեսվում են Կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) իրավասությանը թողնված ֆինանսական միջոցներ, որոնցով տնօրենը (ռեկտորը) ապահովում է Կազմակերպության (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում Նախագծի կատարման համար անհրաժեշտ պայմաններ: Վերադիր ծախսերը (24 ամսվա համար) չպետք է գերազանցեն 700 հազար ՀՀ դրամը:

10.8. Նախահաշվի հիմնավորվածությունը և բաշխումը կարող է քննարկվել Խորհրդի և Խմբի ղեկավարի հետ և կարող է լրամշակվել փոխադարձ համաձայնությամբ:

10.9. Նախահաշվի «Համաֆինանսավորման ծախսեր» հոդվածով կարելի է նախատեսել ենթահոդվածներ, աշխատավարձի, սարքերի և/կամ նյութերի ձեռքբերման, գործուղումների կամ Նախագծի իրականացման անհրաժեշտությունից բխող այլ կարիքների համար:

10.10. Նախահաշվով ներկայացված բոլոր ծախսերը պետք է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

10.11. Նախագծի իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ Նախագծի Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով հատկացված գումարը, Կոմիտեի համաձայնությամբ, կարող է վերաբաշխվել՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում:

III. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11. Հայտի չդիտարկումը

11.1. Հայտը չի քննարկվում հետևյալ դեպքերում.

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ գիտական թեմայի, նախագծի կամ ծրագրի հետ,
- Նախագծի ղեկավարի կողմից նախկինում իրականացված նախագծի կամ գիտական թեմայի վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ Խորհրդի կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- չի բավարարում Մրցույթի հրավերի պայմաններին,
- միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթների:

12. Այլ պայմաններ

12.1. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ *և* այնուհետ*և* հաշվետվություն ներկայացնելու դեպքում Խմբի ղեկավարը պետք է առաջնորդվի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

12.2. Նախագծի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի կողմից ստացած աջակցության մասին.

- *This work was supported by the Science Committee of RA (Research project № _____).*

12.3. Նախագծի իրականացման ընթացքում, 12 ամիսը լրանալուց հետո, Կոմիտե է ներկայացվում ընթացիկ (տարեկան) հաշվետվություն:

12.4. Նախագծի ավարտից հետո Կոմիտե է ներկայացվում ամփոփիչ հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ պլանավորված արդյունքների և ստացված փաստացի արդյունքների համապատասխանության, մշակված տեխնոլոգիայի պատրաստիության մակարդակի և հաշվետվությունն ընդունելու մասին:

12.5. Նախագծի հետագա ֆինանսավորումը դադարեցվում է ընթացիկ հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում:

12.6. Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Նախագծերի անոտացիան և հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

12.7. Կոմիտեի, Կազմակերպության և ֆինանսավորման երաշխավորված Նախագծի ղեկավարի միջև ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է «**Գիտական և գիտատեխնիկական գործունեության** պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում փորձարարական մշակման նախագծի **իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագիր** (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 12.8 կետում նշված պայմանագրերի առկայության դեպքում:

12.8. Ֆինանսավորման երաշխավորված Նախագծի ղեկավարի և Խմբի կատարողների միջև, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով, կնքվում են պայմանագրեր, որոնց պատճենները ներկայացվում են Կոմիտե:

12.9. Ծառայությունների մատուցման դեպքում Կոմիտե են ներկայացվում Նախագծի ղեկավարի և ենթապայմանգրային համագործակցության իրավաբանական անձի (անձանց) միջև կնքված պայմանագրերի պատճենները:

12.10. Համաֆինանսավորող կազմակերպության կողմից երաշխավորված գումարը Պայմանագրում նշված ժամկետներում չփոխանցվելու դեպքում Պայմանագիրը համարվում է լուծված:

IV. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

13. Գիտական փորձաքննությունը

13.1. Մրցույթին ներկայացված հայտերի գնահատման համար ստեղծվում է Խորհուրդ:

13.2. Կոմիտեում ուսումնասիրվում է Մրցույթին ներկայացված և Համակարգում ծածկագիր ստացած Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է Խորհրդի քննարկմանը:

13.3. Խորհուրդը քննարկում է Բիալի ցանկերում (Beall's list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն պարունակող Հայտը գիտական փորձաքննության ենթարկելու հարցը:

13.4. Խորհրդի որոշմամբ հաստատվում է Մրցույթի պայմաններին բավարարող և գիտական փորձաքննության ենթակա Հայտերի ցանկը:

13.5. Խորհուրդը Կոմիտեի հետ համատեղ մշակում և հաստատում է Հայտերի գիտական փորձաքննության գնահատման թերթիկները:

13.6. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են.

- Նախագծի գիտական և գիտատեխնիկական նորույթն ու արդիականությունը,

- մշակվող տեխնոլոգիայի պատրաստիության մակարդակը,

- ակնկալվող վերջնարդյունքի կիրառելիությունը,

- առևտրայնացման հեռանկարը,

- ՀՀ տնտեսության կարիքների բավարարմանն ուղղված լինելը,

- Խմբի ղեկավարի և կատարողների ձեռքբերումները գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառում, նրանց մասնագիտական որակավորումը և տվյալ գիտական Նախագծի պատշաճ կատարման կարողությունը,

- գիտական Նախագծի իրականացման նախադրյալները, փուլերն ու ժամկետները,

- Նախահաշվի հիմնավորվածությունը,

- համաֆինանսավորումը,

- Մրցույթի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

13.7. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում առնվազն երկու փորձագետի կողմից: Որպես փորձագետ կարող են հանդես գալ Խորհրդի անդամները: Անհրաժեշտության դեպքում Խորհուրդը կարող է ներգրավել անկախ փորձագետներ:

13.8. Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկը:

13.9. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականն է:

13.10. Երկու փորձագետների գնահատականները փորձագետի առավելագույն գնահատականի 30 և ավելի տոկոսով տարբերվելու դեպքում Հայտը տրվում է երրորդ փորձագետին: Այդ դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների՝ երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Երեք փորձագետների գնահատականների հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

13.11. Կոմիտեի, Խորհրդի և փորձագետների կողմից Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

14. Գնահատման արդյունքները

14.1. Գիտական փորձաքննության ավարտից հետո Կոմիտեն Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով ձևավորում է վարկանիշային ցանկ և ներկայացնում Խորհրդին՝ քննարկման:

14.2. Խորհուրդը Կոմիտեի նախագահին է ներկայացնում Հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը:

14.3. Կոմիտեն, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային գնահատականը և ՀՀ ԿԳՄՍ նախարարին է ներկայացնում «Ֆինանսավորման երաշխավորված Փորձարարական մշակումների

նախագծերի ցանկը և յուրաքանչյուր նախագծի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման չափը հաստատելու մասին» հրամանի նախագիծ:

14.4. Կոմիտեն Կազմակերպության ղեկավարին տրամադրում է Կազմակերպությունում իրականացվելիք ֆինանսավորման երաշխավորված Նախագծերի ցանկը, ղեկավարների և կատարողների ցուցակը և յուրաքանչյուր Նախագծի կատարման համար նախատեսված ֆինանսավորման չափը:

14.5. Կոմիտեն Համակարգի (grants.scs.am) միջոցով Խմբերի ղեկավարներին տրամադրում է գիտական փորձաքննության արդյունքները:

14.6. Մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված Նախագծերի և դրանց ղեկավարների ցանկը տեղադրվում է Կոմիտեի պաշտոնական կայքում:

Հավելված N 2.1
Փորձարարական մշակումների
նախագծերի հայտերի մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Մաթեմատիկա
1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ
1.3. Ֆիզիկա և աստղագիտություն
1.4. Քիմիա
1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ
1.6. Կենսաբանական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն
2.2. էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ
2.3. Մեխանիկա
2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն
2.5. Քիմիական տեխնոլոգիաներ
2.6. Նյութագիտություն
2.7. Բժշկական սարքաշինություն
2.8. Էկոլոգիա
2.9. Կենսատեխնոլոգիա
2.10. Նանոտեխնոլոգիա

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Ընդհանուր բժշկություն
3.2. Կլինիկական բժշկություն
3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն
4.2. Բուսաբուծություն
4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա

Հավելված N 2.2
Փորձարարական մշակումների
նախագծերի հայտերի մրցույթի հրավերի

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԻՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ (TRL)

ՏՊՄ 1. Հիմնական սկզբունքները հետազոտված են

ՏՊՄ 2. Տեխնոլոգիայի հայեցակարգը ձևակերպված է

ՏՊՄ 3. Տեխնոլոգիան փորձարկված է լաբորատորիայում

ՏՊՄ 4. Տեխնոլոգիան աշխատում է լաբորատորիայում

ՏՊՄ 5. Տեխնոլոգիան փորձարկված է համապատասխան միջավայրում

ՏՊՄ 6. Տեխնոլոգիան ցուցադրված է համապատասխան միջավայրում

ՏՊՄ 7. Նախատիպը ցուցադրված է գործող միջավայրում

ՏՊՄ 8. Տեխնոլոգիական գործընթացն ավարտված է, կա արտադրանք, որը համապատասխանում է ստանդարտներին և կարգավորումներին

ՏՊՄ 9. Արտադրանքը շուկայում է

Հավելված N2.3
Փորձարարական մշակումների
նախագծերի հայտերի մրցույթի հրավերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

Դ Ի Մ Ո Ւ Մ

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում Փորձարարական մշակումների նախագծերի հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացնում եմ «_____ » վերնագրով հայտը:

Խնդրում եմ սահմանված կարգով ընթացք տալ:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«____» _____ 2022 թ.

ՆԱԽԱԳԾԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ[1]

Ներկայացնել հայերեն և անգլերեն մինչև 13 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. Նախագծի անվանումը

2. Նպատակը և խնդիրները

3. Արդիականությունը

4. **Հետազոտական ծրագիրը (մինչև 5 էջ)**

5. Իրականացման եղանակները, մեթոդաբանությունը

6. Օրացուցային պլան (նաև Գանտի աղյուսակ)

7. Նախագծի իրականացման համար առկա և անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները

8. Նախագծի կատարողների ձեռքբերումները և փորձը տվյալ բնագավառում

9. Նախագծի ինովացիոն պոտենցիալը

10. Նախագծի ռիսկերը և դրանց հաղթահարման եղանակներն ու միջոցները

11. Տեխնոլոգիայի պատրաստության ներկա մակարդակը (Current TRL)

[1] *Դատարկ դաշտերը նախատեսված են դրանցում տեքստը շարադրելու համար:*

Տեխնոլոգիայի պատրաստիության ներկա մակարդակը (Current TRL)

ՏՊՄ 1. Հիմնական սկզբունքները հետազոտված են ☐

ՏՊՄ 2. Տեխնոլոգիայի հայեցակարգը ձևակերպված է ☐

ՏՊՄ 3. Տեխնոլոգիան փորձարկված է լաբորատորիայում ☐

ՏՊՄ 4. Տեխնոլոգիան աշխատում է լաբորատորիայում ☐

ՏՊՄ 5. Տեխնոլոգիան փորձարկված է համապատասխան միջավայրում ☐

ՏՊՄ 6. Տեխնոլոգիան ցուցադրված է համապատասխան միջավայրում ☐

ՏՊՄ 7. Նախատիպը ցուցադրված է գործող միջավայրում ☐

ՏՊՄ 8. Տեխնոլոգիական գործընթացն ավարտված է, կա արտադրանք, որը համապատասխանում է ստանդարտներին և կարգավորումներին ☐

ՏՊՄ 9. Արտադրանքը շուկայում է ☐

12. Նախագծի ավարտին ակնկալվող տեխնոլոգիայի պատրաստիության մակարդակը (Output TRL)

ՏՊՄ 1. Հիմնական սկզբունքները հետազոտված են ☐

ՏՊՄ 2. Տեխնոլոգիայի հայեցակարգը ձևակերպված է ☐

ՏՊՄ 3. Տեխնոլոգիան փորձարկված է լաբորատորիայում ☐

ՏՊՄ 4. Տեխնոլոգիան աշխատում է լաբորատորիայում ☐

ՏՊՄ 5. Տեխնոլոգիան փորձարկված է համապատասխան միջավայրում ☐

ՏՊՄ 6. Տեխնոլոգիան ցուցադրված է համապատասխան միջավայրում ☐

ՏՊՄ 7. Նախատիպը ցուցադրված է գործող միջավայրում ☐

ՏՊՄ 8. Տեխնոլոգիական գործընթացն ավարտված է, կա արտադրանք, որը համապատասխանում է ստանդարտներին և կարգավորումներին ☐

ՏՊՄ 9. Արտադրանքը շուկայում է ☐

13. Ակնկալվող տեխնոլոգիայի՝

1) առանձնահատկությունները

2) կիրառության բնագավառները

3) նմանակների հետ համեմատության ցուցանիշները (հիմնական տեխնիկական, տնտեսական և բնապահպանական առավելություններն ու թերությունները)

4) շուկայի վերլուծությունը

14. Նախագծի իրականացման արդյունքների առևտրայնացման հեռանկարը[2]

Ի՞նչ ծավալի ֆինանսավորում է անհրաժեշտ Նախագծի արդյունքների առևտրայնացման հետագա ներդրումային ծախսերի համար:	հազ. դրամ
Ի՞նչ ժամանակահատվածներում է հնարավոր հասնել ծախսածածկման:	ամիս
Քանի՞ աշխատատեղ կարող է ստեղծվել Նախագծի արդյունքների առևտրայնացման և հետագա արտադրության կազմակերպման համար:	
Ո՞վքեր կարող են լինել Նախագծի արդյունքի հնարավոր սպառողները (սպառողների ու պահանջմունքի մոտավոր քանակները առևտրայնացումից հետո առաջին երեք տարիների համար):	
Սպառողների ո՞ր պահանջմունքները կբավարարվեն Նախագծի արդյունքների առևտրայնացման միջոցով (ներկայումս ինչպե՞ս են բավարարվում այդ պահանջմունքները և ի՞նչ առավելություններ կամ թերություններ ունի ձեր առաջարկը ներկայիս լուծումների համեմատ):	
Ի՞նչ մասնագետներ են անհրաժեշտ նախատեսվող արդյունքի առևտրայնացման և հետագա արտադրության համար:	
Արդյո՞ք նախատեսվող բիզնեսը կարող է լինել շահութաբեր՝ առևտրայնացումից հետո առաջին երեք տարիների համար:	
Ինչպիսի՞ այլ տնտեսական արդյունք կարող է գրանցվել Նախագծի արդյունքերի առևտրայնացման շնորհիվ:	
Տնտեսության մեջ ներդրման համար անհրաժեշտ ներդրումներն ու ժամկետները:	

[2] *Լրացվում է համապատասխան փվյալների առկայության դեպքում:*

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2022 թ. հոկտեմբերի 17-ի
N 1896-Ա/2 հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) կազմակերպում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում **փորձարարական մշակումների նախագծերի** (Experimental Development Projects) հայտերի ընտրության **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտը լրացնում և ներկայացնում է խմբի ղեկավարը՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի միջոցով (grants.scs.am)՝ մինչև **2022 թ. նոյեմբերի 25-ը** ներառյալ: Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին:

Մրցույթի հրավերի փաթեթը տեղադրված է Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում (http://scs.am/):

Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 8-րդ հարկ, 808 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22)՝ մինչև **2022 թ. դեկտեմբերի 2-ը** ներառյալ:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Կոմիտեի գիտական քաղաքականության վարչության գիտական մշակումների պատվերի ձևավորման և ինովացիոն ծրագրերի բաժնում՝ աշխատանքային օրերին, ժամը 14:00 - 17:00, հեռ.՝ 210 140 (105):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե